ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 34-Ա

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը

1. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և դրա վրա գտնվող շինությունն ուղղակի վաճառքի եղանակով՝ գնման նախապատվության իրավունք ունեցող անձին օտարելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0105-0051 կադաստրային ծածկագրով 13500 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքը քաղաքացուն օգտագործման (վարձակալության) տրամադրելու մասին:
4. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 5-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:
5. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 30-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
7. Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 229 որոշումը ,«Վերին Պտղնի համայնքի մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ

առևտրային կազմակերպություն ստեղծելու, դրա կանոնադրությունը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ Ն 35-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջով.«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերի պահանջներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր պարզեցված հատակագիծը,հողամասերի սեփականատերեր՝ Սուսաննա Պողոսյանի և Արամ Աբաջյանի դիմումները.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Սուսաննա Պողոսյանի սեփականություն հանդիսացող 07-062-0041-0063 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.5 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն՝ պտղի չորանոց կառուցելու համար՝ համաձայն կից ներկայացված կառուցապատման նախագծի:

2. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Արամ Աբաջյանի սեփականություն հանդիսացող 07-062-0203-0077 կադաստրային ծածկագրով 0.01261 հա գյուղատնտեսական նշանակության

վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի դ) ենթակետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և քաղ .Զեյթուն Օսոյանի դիմումը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին ուղղակի վաճառքի եղանակով՝ գնման նախապատվության իրավունք ունեցող քաղ. Զեյթուն Օսոյանին օտարել համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0016-0080 կադաստրային ծածկագրով 0.00369 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և դրա վրա առկա 07-062-0016-0080-001 կադաստրային ծածկագրով 38.6 քմ սպասարկման օբյեկտի մասը՝ հիմք սեփականության վկայական N26072021-07-0160:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական շինության 1 քմ -ի համար՝ 28854 (քսանութ հազար ութ հարյուր հիսունչորս) ՀՀդրամ (տարածագնահատման 8-րդ գոտու՝ կիրառված գործակիցը 0.321)

2) Հասարակական կառուցապատման հողամասի 8-րդ գոտու 1 քմ-ի կադաստրային արժեքը՝ 16177 (տասնվեց հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) ՀՀդրամ (տարածագնահատման 8-րդ գոտու՝ կիրառված գործակիցը 0.3206) :

3. Առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի եղանակով գնելու վերը նշված գույքը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 07-062-0105-0051 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 13500 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ, 60-րդ հոդվածների պահանջներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46-րդ կետով,ինչպես նաև Գագիկ Կոյայի Ծառուկյանի, նրա ներկայացուցիչ Իլոնա Ռուբիկի Միրզոյանի դիմումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0105-0051 կադաստրային ծածկագրով 13500 քմ բնակավայրերի նշանակության բնակավայրի այլ գործառնական նշանակության հողամասը Գագիկ Ծառուկյանին օգտագործման կամ վարձակալության տրամադրելու մասին դիմումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի զեկույցն այնմասին,որ վերը նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը հանդիսանում է ոչ գյուղատնտեսական նշանակության մինչդեռ՝ քաղ. Գագիկ Ծառուկյանի կողմից այն օգտագորրծվում է ոչ նպատակային հետևաբար՝ ՀՀ օրենսդրությամբ այն չի կարող տրամադրվել վարձակալության և կառուցապատման նպատակով ինչպես նաև այն ընդգրկված չէ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում: Հողամասը կարող է օտարվել օրենսդրությամբ սահմանված աճուրդային կարգով՝սեփականության իրավունքով :

Համայնքի ավագանին որոշում է՝

Հավանություն չտալ համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0105-0051 կադաստրային ծածկագրով 13500 քմ բնակավայրերի նշանակության բնակավայրի այլ

գործառնական նշանակության հողամասը Գագիկ Ծառուկյանին օգտագործման կամ վարձակալության տրամադրելու մասին վերջինիս դիմումին :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 38-Ա
ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և 3-րդ մասի պահանջներով .

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «Վերին Պտղնի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 5-Ա որոշմամբ հաստատված հավելվածի «Վերին Պտղնի համայնքի սեփականության ամփոփ տեղեկագիր»-ի 0100260 տողի <<20 854 315>> թիվը փոխարինել <<22 226 315>> թվով:

2. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «Վերին Պտղնի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 5-Ա որոշմամբ հաստատված հավելվածի «Վերին Պտղնի համայնքի սեփականության ամփոփ տեղեկագիր»-ը լրացնել N 0100264 - 0100274 տողերով :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

«Հավելված
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ -38Ա որոշման»

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ 2021 թ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

N	Անվանումը	Թողարկման կառուցման տարեթիվը	Փաստացի		Հաշվապահական	
			Քանակը	Արժեքը	Քանակը	Արժեքը
0100001	Գյուղապետ. վարչ. շենք	2010թ.	1	21416159	1	21416159
0100002	Հողամաս			3 237 854		3 237 854
0100003	Շենք համայնքային կենտրոն	2015թ		24514100		24514100
0100004	Կոյուղի	2007թ		901944.8		901944.8
0100005	Հուշարձան -խաչքար		1	3 880 000	1	3 880 000
0100006	Ցայտաղբյուր		1	47 500	1	47 500
0100007	Լուսատու LED 80W	2016թ.	1	46800	1	46800
0100008	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100009	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100010	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100011	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100012	Լուսատու LED 80W	2016թ.	1	46800	1	46800
0100013	Լուսատու LED 80W	2016թ.	1	46800	1	46800
0100014	Լուսատու LED 80W	2016թ.	1	46800	1	46800
0100015	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100016	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100017	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100018	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100019	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100020	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100021	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100022	Լուսատու LED 80W	2016թ	1	46800	1	46800
0100023	Լուսատու LED 80W	2016թ	1	46 800	1	46800
0100024	Լուսատու LED 80W	2016թ.	1	46 800	1	46800
0100025	Լուսատու LED 100W	2017թ	1	29 250	1	29250
0100026	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100027	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100028	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100029	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100030	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100031	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100032	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100033	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100034	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100035	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100036	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100037	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100038	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100039	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100040	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100041	Լուսատու LED 100W	2017թ	1	29250	1	29250
0100042	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100043	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100044	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100045	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200

0100046	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100047	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100048	Լուսատու LED 50W	2018թ	1	11200	1	11200
0100049	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100050	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100051	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100052	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100052	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100053	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100054	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100055	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100056	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100057	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100058	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100058	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100059	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100060	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100061	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100062	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100063	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100064	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100065	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100066	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100067	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100068	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100069	Լուսատու LED 100W	2018թ	1	24500	1	24500
0100070	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100071	Լուսատու LED 50W	2019թ.	1	14000	1	14000
0100072	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100073	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100074	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100075	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100076	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100077	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100078	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100079	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100080	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100081	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100082	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100083	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100084	Լուսատու LED 50W	2019թ	1	14000	1	14000
0100085	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100086	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100087	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100088	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100089	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100090	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100091	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100092	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100093	Լուսատու LED 100W	2019թ	1	29000	1	29000
0100094	Ավտոմեքենա թեթև Մարդատար –Սեդան Hyundai Elantra 2.01	2010թ	1	2 722 636	1	2 722 636
0100095	Ավտոմեքենա Բեռնատար – ինքնաթափ ZIL MMZ-4502	2016թ	1	2 957 825	1	2 957 825
0100096	Զրուցարան	2017թ	1	346 500	1	346500
0100097	Նստարան	2017թ	1	39 600	1	39 600

0100098	Խաղասարք ճոճանակ 2 նստատեղով	2017թ	1	64350	1	64350
0100099	Խաղասարք ճոճանակ նավակ	2017թ	1	34650	1	34650
0100100	Խաղասարք ճաճանակ զսպանակ	2017թ	1	34650	1	34650
0100101	Խաղասարք կարուսել	2017թ	1	44550	1	44550
0100102	Խաղասարք սղարան	2017թ	1	34650	1	34650
0100103	Խղասարք աստիճանաձև	2017թ	1	24750	1	24750
0100104	Տակդիր փայտե	2015թ	1	7920	1	7920
0100105	Տեսախցիկ Dahua DH-HAC-HFW1200RP	2016	1	29700	1	29700
0100106	Տեսախցիկ Dahua DH-HAC-HFW1200RP	2016թ	1	29700	1	29700
0100107	Տեսախցիկ Dahua DH-HAC-HFW1200RP	2016թ	1	29700	1	29700
0100108	Տեսախցիկ Dahua DH-HAC-HFW1200RP	2016թ	1	29700	1	29700
0100109	Տեսախցիկ Dahua DH-HAC-HFW1200RP	2016թ	1	29700	1	29700
0100110	Տեսախցիկ կլոր փոքր	2016թ	1	24750		24750
0100113	Գրասեղան	1998թ	1	4750		4750
0100114	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100115	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100116	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100117	Տաքացուցիչ էլեկտրական TESA	2007թ	1	16490	1	16490
0100118	Տաքացուցիչ էլեկտրական TESA	2007թ.	1	16490	1	16490
0100119	Տաքացուցիչ էլեկտրական TESA	2007թ	1	16490	1	16490
0100120	Օդորակիչ Zanussi	2015թ.	1	287100	1	287100
0100121	Սեղան	2014թ.	1	29400	1	29400
0100122	Սեղան	2014թ.	1	29400	1	29400
0100123	Սեղան	2014թ	1	29400	1	29400
0100124	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100125	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100126	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100127	Նստարան	2014թ.	1	19600	1	19600
0100128	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100129	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100130	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100131	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100132	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100133	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100134	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100135	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100136	Նստարան	2014թ	1	19600	1	19600
0100137	Հեռուստացույց Toshiba	2015թ.	1	59400	1	59400
0100138	Նստարան / մոխրագույն ծուլվածքով/	2008թ.	1	24250	1	59400
0100139	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100140	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100141	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100142	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100143	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100144	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100145	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100146	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000

0100147	Նստարան / Վերին Պտղնի /	2019թ	1	108000	1	108000
0100148	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100149	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100150	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100151	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100152	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100153	Փայտե աթոռ / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100157	Նստարան / երկար/	2012թ	1	19600	1	19600
0100158	Նստարան / երկար/	2012թ	1	19600	1	19600
0100159	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100160	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2007թ	1	6467	1	6467
0100161	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100162	Աթոռ փայտե / ծաղկավոր/	2010թ	1	4900	1	4900
0100163	Հոսանքի կարգավորիչ CHAVY SVC-500VA		1	9700	1	9700
0100164	Պումպ KALDO QB-60		1	43650	1	43650
0100165	Տաքացուցիչ Mercury	2014թ	1	78400	1	78400
0100166	Համակարգիչ-Մոնոբլոկ Lenovo G3220T IdeaCentre C460 21,5"	2013թ	1	88200	1	88200
0100167	Համակարգիչ Intel Pentium G3220	2009թ	1	58200	1	58200
0100168	Բազկաթոռ /փափուկ/	2013թ	1	68600	1	68600
0100169	Բազկաթոռ /փափուկ/	2013թ	1	68600	1	68600
0100170	Բազմոց /փափուկ/	2013թ	1	147000	1	147000
0100171	Լրագրասեղան	2013թ	1	24500	1	24500
0100172	Հեռուստացույց TCL	2013թ	1	78400	1	78400
0100173	Պահարան ներկառուցված		1	19400	1	19400
0100174	Սառնարան Hitachi	2013թ	1	78400	1	78400
0100175	Բազկաթոռ ղեկավարի / կաշվե/	2013թ	1	49000	1	49000
0100176	Մոնիտոր LG 22MP58VQ-W	2009թ.	1	38800	1	38800
0100177	Տեսաձայնագրման սարք Dahua	2016թ	1	39600	1	39600
0100178	Օդորակիչ Whirlpool	2011թ	1	78400	1	78400
0100179	Պահարան մետաղական		1	49000	1	49000
0100180	Գրասեղան /3 դարակ/	2012թ	1	19600	1	19600
0100181	Սեղան դիմադիր	2012թ	1	14700	1	14700
0100182	Սեղան կողադիր	2012թ	1	19600	1	19600
0100183	Աթոռ մետաղական		1	4900	1	4900
0100184	Աթոռ մետաղական		1	4900	1	4900
0100185	Աթոռ մետաղական		1	4900	1	4900
0100186	Աթոռ փայտե /սև/		1	6467	1	6467
0100187	Աթոռ փայտե /սև/		1	6467	1	6467
0100188	Դրոշ ՀՀ		1	34300	1	34300
0100189	Զինանշան		1	29400	1	29400
0100190	Համակարգիչ Pentium Dual Core E6600	2011թ	1	41160	1	41160
0100191	Օդորակիչ Rheem SDMB-HE18T01	2014թ	1	117600	1	117600
0100192	Մոնիտոր Samsung SyncMaster B2030	2011թ.	1	19600	1	19600
0100193	Համակարգիչ Pentium 4	2006թ	1	8730	1	8730
0100195	Մոնիտոր Samsung SyncMaster 943	2006թ	1	19400	1	19400
0100196	Համակարգիչ Intel Core i3 3210	2013թ	1	59400	1	59400
0100199	Տպիչ բազմաֆունկցիոնալ LBP2900		1	34300	1	34300

0100200	Սեղան համակարգչային/ շարժական/		1	17640	1	17640
0100201	Սեղան համակարգչային /շարժական/		1	17640	1	17640
0100202	Գրասեղան / 3 դարակ/	2007թ	1	19400	1	19400
0100203	Գրասեղան / 3 դարակ/	2007թ	1	19400	1	19400
0100204	Գրասեղան / 3 դարակ/	2007թ.	1	19400	1	19400
0100205	Գրապահարան /ապակյա/		1	33950	1	33950
0100206	Գրապահարան	2007թ	1	24250	1	24250
0100207	Զգեստապահարան /4 դուռ/	2012թ	1	39200	1	39200
0100208	Բազկաթոռ ղեկավարի /կաշվե/	2011թ	1	49000	1	49000
0100209	Աթոռ մետաղական	2010թ.	1	4900	1	4900
0100210	Աթոռ մետաղական	2010թ.	1	4900	1	4900
0100211	Աթոռ մետաղական	2010թ.	1	4900	1	4900
0100212	Աթոռ մետաղական	2010թ.	1	4900	1	4900
0100213	Աթոռ մետաղական	2010թ.	1	4900	1	4900
0100214	Տպիչ բազմաֆունկցիոնալ Canon MF4410	2013թ.	1	83300	1	83300
0100215	Սեղանի տակդիր		1	17640	1	17640
0100216	Սեղան համակարգչային	1999թ	1	14250	1	14250
0100217	Գրասեղան /3դարակ/		1	19400		19400
0100219	Սվիչ TP-Link		1	2940	1	2940
0100220	Երթուղիչ wifi TP-Link		1	4900	1	4900
0100221	Մոնիտոր Asus MS227N	2016թ	1	24750	1	24750
0100222	Համակարգիչ Pentium Dual Core E5300	2014թ	1	34300		34300
0100223	Անխափան սնուցման սարք Invader-A600		1	5880	1	5880
0100225	Տպիչ բազմաֆունկցիոնալ Canon MF232V	2019թ	1	144000	1	144000
0100227	Գրասեղան	2007թ	1	19400	1	19400
0100228	Համակարգիչ Intel Core i3 8100	2019թ	1	283000	1	283000
0100229	Մոնիտոր LG 22MP58VQ-P	2009թ	1	38800	1	38800
0100230	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100231	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100232	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100233	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100234	Մոնիտոր LG 22MP65HQ	2016թ	1	49000		49000
0100235	Համակարգիչ Intel Pentium G3220	2009թ	1	58200	1	58200
0100236	Գրասեղան	2007թ	1	19400	1	19400
0100239	Գրապահարան	2007թ	1	24250	1	24250
0100240	Գրապահարան	2007թ	1	24250	1	24250
0100241	Աթոռ մետաղական	2010թ	1	4900		4900
0100242	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100243	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100244	Աթոռ մետաղական	2010թ	1	4900	1	4900
0100246	Ղեկավարի սեղան -180սմ	2018թ	1	140000	1	140000
0100247	Գրապահարան ապակե	2018թ	1	90000	1	90000
0100248	Սեղան 140սմ	2018թ	1	40000	1	40000
0100249	Աթոռ ղեկավարի	2018թ	1	100000	1	100000
0100250	Աթոռ դիմասեղանի	2018թ	2	70000	2	70000
0100251	Աթոռ	2018թ	30	240000	30	240000
0100252	Աթոռ աշխատակցի	2018թ	1	65000	1	65000
0100253	Բազալտե ցայտաղբյուր	2020թ	1	200000	1	200000
0100254	Լուսատու LED 100W	2020թ.	1	18000	1	18000
0100255	Տաղավար /գրուցարան/	2020թ	1	378000	1	378000

0100256	C-40 սիրենա 380B	2020թ	1	300000	1	300000
0100257	ԶԻԼ ավտոմեքենայի անվադող 9.00R20I-N142B-1 14PR OMSK	2020թ	6	360000	1	360000
0100258	Համակարգիչ Corei 39100/H310/Ram8GB/SSD240GB/KB Geniu	2020թ	1	220000	1	220000
0100259	Մանկապարտեզի շենք	2020թ	1	78 643 164	1	78 643 164
0100260	Խմելու ջրի ջրագիծ	2020թ	1	22 226 315	1	22 226 315
0100261	Էլ ժամացույց	2021թ.	1	14000	1	14000
0100262	C-40 սիրենա 380B	2021թ.	1	300000	1	300000
0100263	Արևային էլեկտրական կայաններ	2021թ.	2	9483000	2	9483000
0100264	Սեղան մանկական	2021թ	16	131268	16	131268
0100265	Զգեստապահարանմանկական 2.10մ*30սմ*95սմ	2021թ	10	462936	10	462936
0100266	Սեղան ղեկավարի	2021թ	1	56256	1	56256
0100267	Դարակներով պահարան	2021թ	1	44532	1	44532
0100268	Աթոռ՝ գրասենյակային	2021թ	1	24990	1	24990
0100269	Աթոռ մանկական	2021թ	30	146430	30	146430
0100270	Աթոռ մանկական	2021թ	30	146430	30	146430
0100271	Լուսատու լեդ 100W էլեկտրական 4100K	2021թ	1	18000	1	18000
0100272	Լուսատու լեդ 100W էլեկտրական 4100K	2021թ	1	18000	1	18000
0100273	Լուսատու լեդ 100W էլեկտրական 4100K	2021թ	1	18000	1	18000
0100274	Լուսատու լեդ 100W էլեկտրական 4100K	2021թ	1	18000	1	18000
	Հողային ֆոնդ			146.97հա		146.97

Ընդամենը ցուցակով.

Հերթական համարների քանակ 0100274/ զրո մեկ զրո զրո երկու հարյուր յոթանասուն չորսմ/
/ տառերով /

Միավորներ ընդհանուր քանակը՝ 377 հատ, 146.97հա

Հանձնաժողովի նախագահ համայ. ղեկ. տեղ. _____ Յու.Գևորգյան
/ ստորագրություն /

Համայնքի ղեկավարի խորհրդական _____ Մ. Հակոբյան
/ ստորագրություն /

Հանձնաժողովի անդամներ առաջ. մասնագ. _____ Ն. Շառոյան
/ ստորագրություն /

Ավագանու անդամ _____ Ա. Գասպարյան
/ ստորագրություն /

Ավագանու անդամ _____ Ա. Ալեքսանյան
/ ստորագրություն /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 39-Ա

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով .

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 25-ի «Վերին Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող ջրագծերը՝ խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին որպես անհատատույց սեփականություն հանձնելու մասին» թիվ 30-Ա որոշումը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ. «Վերին Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող 22 226 315 (քսաներկու միլիոն երկու հարյուր քսանվեց հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ արժողությամբ 3-րդ փողոցի, <<Նորավան>> թաղամասի 1-ին, 2-րդ և 3-րդ փողոցների ջրագծերը/հիմք սեփականության վկայական N30082021-07-0186/ ՝ անհատատույց սեփականության իրավունքով հանձնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 40-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-137-Ն օրենքի 41-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1524-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի Պարզեցված գլխավոր հատակագիծը, <<Գեոլենդ>> ՍՊԸ -ի կողմից կազմած և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 07-062-0023-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասից 0.06983 հա հողամասի նկատմամբ ճանաչել Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքային սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 41-Ա

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԹԻՎ 229 ՈՐՈՇՈՒՄԸ , «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի , հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 229 որոշումը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 06-ի «Վերին Պտղնի համայնքի մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին թիվ 229 որոշումը.

2. Հաստատել

1) «Վերին Պտղնի համայնքի մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի:

2) Աշխատողների քանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Հավելված 1
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14-ի
թիվ 41-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ »համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ՝Կոտայքի մարզ ,գ.Վերին Պտղնի 1-ին փ.թիվ 2/1

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ »համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ».ՀՈԱԿ

3) ռուսերեն լրիվ՝ « ДЕТСКИЙ САД - ЯСЛИ СООБЩЕСТВА ВЕРИН ПТГНИ ». общественная некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ «ДЕТСКИЙ САД - ЯСЛИ ВЕРИН ПТГНИ »ОНО

5) անգլերեն լրիվ՝«VERIN PTGHNI KINDERGARTEN-NURSERY»community non-commercial organizationանգլերեն կրճատ՝ «VERIN PTGHNI KINDERGARTEN -NURSERY»CNCO:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների

ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.

2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.

3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.

4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.

5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 2
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 41-Ա որոշման

Հաստիքացուցակ
<<Վերին Պտղնի համայնքի մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմ

Աշխատակիցների թվաքանակը՝ 12

N	Պաշտոնի անվանում	Հաստիքային միավոր	Աշխատակիցների քանակ	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Աշխատավարձի չափը / դրամ /
1	Տնօրեն	1	1	130 000	130 000
2	Հաշվապահ	0,5	1	93 000	46 500
3	Բուժքույր	0,5	1	93 000	46 500
4	Տնտեսվար	0,5	1	93 000	46 500
5	Խոհարար	1	1	93 000	93 000
6	Խոհարարի օգնական	0,5	1	93 000	46 500
9	Դաստիարակ	2.24	2	93 000	104 160
10	Դաստիարակի օգնական	1	2	93 000	93 000
11	Տնտեսվար	0,5	1	93 000	46 500
12	Հավաքարար	0,5	1	93 000	46 500
	Ընդամենը	8.24	12		699 160

Հաստիքային միավորների թիվը 1 խմբի հաշվարկով

N	Նախադպրոցական խմբեր Պաշտոնի անվանումը	5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում 8 ժամ
1.	Նախադպրոցական՝ դաստիարակ	1.12
2.	Նախադպրոցական՝Դաստիարակի օգնական	1
3.	Մսուրային՝ Կրտսեր տարիքի առաջին խումբ 2 տարեկանից մինչև 3 տարեկան Դաստիարակ	1.12
4.	Մսուրային՝Կրտսեր տարիքի առաջին խումբ 2 տարեկանից մինչև 3 տարեկան Դաստիարակի օգնական	1